

## Արձանագրություն №8/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. մայիսի 6-ին տեղի ունեցած արտահերթ նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 62-ը (վաթսուներկուսը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Գ. Գևորգյանը, «ՀՀ կառավարության կողմից ԵՊՀ կանոնադրության մեջ արված փոփոխության հարցը, որով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմում նվազեցվում է պրոֆեսորադասախոսական կազմի համամասնությունը» օրակարգային հարցով ԵՊՀ գիտական խորհրդի 35 անդամների պահանջի հիման վրա, բացելով գիտական խորհրդի արտահերթ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին:

Գիտական խորհրդի անդամների կողմից օրակարգի այլ հարց չառաջարկվեց, և բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

**1.Լսեցին.-** ՀՀ կառավարության կողմից ԵՊՀ կանոնադրության մեջ արված փոփոխության հարցի մասին, որով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմում նվազեցվում է պրոֆեսորադասախոսական կազմի համամասնությունը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ ի տարբերություն «ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի» նախագծի, որը պետք է անցնի անհրաժեշտ ընթացակարգը, ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ուստի հրատապ արձագանքման անհրաժեշտություն է առաջացել և պատրաստվել է հայտարարության տեքստի նախագիծ, որում տրվում են անհրաժեշտ արձագանքները և անելիքները: Ըստ նրա՝ Կառավարության որոշումն իրավական ու էթիկական տեսանկյունից խոցելի է, քանի որ հակասում է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածին, և քանի դեռ օրենքի նախագիծը վիճարկվում է ՀՀ սահմանադրական դատարանում, շատ ավելի ցածր իրավական ուժ ունեցող ակտով նույն խնդիրը լուծելը իրավական ու էթիկական առումով անընդունելի է: Բացի այդ, կառավարության որոշումն ընդունվել է գրավոր ընթացակարգով, չզեկուցվող հարցերի շարքում, չնայած որոշ գերատեսչությունների կողմից տրված բացասական կարծիքին: Եվ քանի որ հիմնական շահառուն ԵՊՀ-ն է և գիտական խորհուրդը չէր կարող չարձագանքել: Գ. Ղազինյանը տեղեկացրեց, որ հարցի վերաբերյալ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ Ազգային ժողովում հայտնել է իր մտահոգությունները և այդ որոշման հարցով դիմելու է ՀՀ սահմանադրական դատարան:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ ներկայացված հայտարարության նախագծով առաջարկվում է մի քանի

գործողություններ: Նախ՝ կառավարության որոշման սահմանադրականության հարցը որոշելու իրավասությունը պատկանում է ՀՀ Սահմանադրական դատարանին և քանի որ այդ հիմքերը կան, պետք է դիմել սահմանադրական դատարան: Բացի այդ, կառավարության որոշումը հակասում է մի շարք օրենքների դրույթներին և այդ մասով վեճը լուծելու իրավասությունը պատկանում է վարչական դատարանին և եթե զուգահեռ վարչական դատարանում գործընթաց սկսվի, և վարչական դատարանը հայցի ապահովում կիրառի, ապա դրա արդյունքում կարելի է ակնկալել, որ կառավարության որոշումը չի կարող կիրառվել: Առաջարկվում է դիմել նաև Եվրոպական համալսարանների ասոցիացիային, քանի որ 1988 թ. ԵՊՀ-ն միացել է «Magna Charta»-ին, որտեղ հռչակված են բուհական ինքնավարության և ակադեմիական ազատության, ինչպես նաև քաղաքական իշխանության միջամտություններից զերծ լինելու սկզբունքները:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Ներկարարյանը նկատեց, որ ԵՊՀ-ն գտնվում է ճգնաժամի մեջ և կառավարման լրջագույն խնդիր է առկա: Վ. Հովհաննիսյանը նշեց, որ առկա են մի քանի ռիսկեր: Լավագույն լուծումը ՀՀ կառավարության որոշման իրավական գործողության կասեցումն է, իսկ այդ պայմաններում հնարավորություն է ստեղծվում հրաժարական տված ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից դիմումները հետ վերցնել կամ փոխարինել այդ անդամներին: Եթե հոգաբարձուների խորհրդի լուծարումից անցնում է 3 ամիս ժամանակահատված, որի ընթացքում չի ձևավորվում հոգաբարձուների խորհուրդը, ՀՀ հիմնադրամների մասին օրենքի ուժով, արդարադատության նախարարը նշանակում է 3 հոգուց կազմված ժամանակավոր խորհուրդ, որը պետք է ձևավորի հիմնադրամի մարմինները, այդ թվում՝ հոգաբարձուների խորհուրդը ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված կարգով: Եթե 6-ամսյա ժամկետում չհաջողվի ձևավորել կառավարման մարմինը, հիմնադրամը՝ տվյալ պարագայում ԵՊՀ-ն, ինքնալուծարվում է: Վ. Հովհաննիսյանը համոզմունք հայտնեց, որ որևէ մեկը, այդ թվում նաև քաղաքական իշխանությունը, նման պատասխանատվություն չի վերցնի, սակայն այլևս հապաղելու իրավունք չկա: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս. Գրիգորյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք դադարեցվել է, թե ոչ հոգաբարձուների խորհրդի լիազորությունները և ի՞նչ քայլեր պետք է իրականացվեն: Վ. Հովհաննիսյանը ի պատասխան նկատեց, որ այդ հարցում առկա է կարծիքների բախում ԵՊՀ-ի և լիազոր մարմնի միջև: Ազատման դիմում գրած հոգաբարձուների խորհրդի անդամները կարող են ասել, որ հրաժարական են տվել և լիազորությունները դադարեցված են, սակայն ԵՊՀ իրավաբանը հիմնավորումներ է ներկայացրել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի դեռևս ցրված չլինելու և անդամների լիազորությունները դադարեցված չլինելու մասին: Ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է ապահովել

հոգաբարձուների խորհրդի քվորումը, բնականոն գործունեությունը, քանի որ գործող խորհուրդը, քանի դեռ դադարեցված չէ լիազորությունը, իրավասու է նիստեր գումարել:

Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ գրություն է ուղարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին և լիազոր մարմնին, հանդիպել հոգաբարձուների խորհրդի՝ համալսարանական պրոֆեսորադասախոսական կազմի անդամների և ԿԳՄՍ նախարարի հետ՝ նշելով, որ անհրաժեշտ է ապահովել հոգաբարձուների խորհրդի քվորումը և հրավիրել նիստ առաջարկված օրակարգով՝ ընդունել ԵՊՀ ռեկտորի ժ/պ-ի հրաժարականի դիմումը, նշանակել նոր ժամանակավոր պաշտոնակատար, քննարկել խորհրդի անդամների հրաժարականի դիմումները: Գ. Գևորգյանը նկատեց նաև, որ այդ առաջարկի ընթացքում ընդունվեց արդեն ՀՀ կառավարության որոշումը, և այլևս նախկին առաջարկը ժամանակավրեպ է: Մ. Գրիգորյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք ԵՊՀ ռեկտորի ժ/պ-ը տեղյակ է եղել իր հրաժարականի դիմումով ձգնաժամի խորացման մասին և եթե ոչ, ապա խնդրեց հետ վերցնել դիմումը: Ի պատասխան՝ Գ. Գևորգյանը փաստեց, որ ինքը տեղյակ չի եղել լիազոր մարմնի քայլերից և որևէ մեկը նախօրոք տեղեկացված չի եղել իր հրաժարականի դիմումի մասին, որը եղել է անակնկալ և նպատակ է ունեցել դրանով արագացնել ԵՊՀ-ում կառավարման մարմնի բնականոն գործունեությունը վերականգնելու ուղղությամբ քայլերը: Նա նաև նշեց, որ չէր կարող ենթադրել, որ հրաժարականի դիմումից հետո կստեղծվի նման բարդ իրավիճակ, հետին թվով կարելի է ենթադրել, որ դիմումը զուտ «դետոնատորի» դեր է խաղացել: Մ. Գրիգորյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք ռեկտորի ժ/պ-ի հրաժարականի դիմումի հետ վերցնելու դեպքում, իրավունք կա՞ կառավարության ընդունած որոշումը, կյանքի կոչելու, ինչին Գ. Գևորգյանը պատասխանեց, որ մեկը մյուսին չի հակասում: Գ. Ղազինյանը դիտարկում արեց, որ հրաժարականի դիմումը պետք է լսի և ընդունի հոգաբարձուների խորհուրդը, որը փաստացի գոյություն չունի: Նա նաև վկայակոչելով Գ. Գևորգյանին՝ նշեց, որ հոգաբարձուների խորհրդի 15 անդամների հրաժարականի դիմումներից հետո ռեկտորի ժ/պ-ը դիմել է ԿԳՄՍ նախարարին՝ դիմում գրած անդամների փոխարեն 1 ամսվա ընթացքում նոր անդամներ նշանակելու հարցով և շտապել է, որովհետև նրանք դեռևս ազատված չեն, հոգաբարձուների խորհուրդ չի եղել, որպեսզի նրանց հրաժարականների դիմումները ընդունի: Այդ կապակցությամբ Գ. Գևորգյանը նշեց, որ ներկայումս կա հետևյալ իրավիճակը. տարբերակ առաջին՝ հոգաբարձուների խորհրդի ազատման դիմում գրած անդամները ազատված են, մեկ ամիսը լրանում է և պետք է նոր անդամներ առաջադրվեն, կամ, տարբերակ երկրորդ՝ նրանք համարվում են դեռևս ոչ ազատված, և կա հոգաբարձուների խորհուրդ: Նա նաև հայտնեց, որ մայիսի 10-ի համար առաջարկել է հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգ, թեև հասկանալով, որ քվորում չի լինի, սակայն կմասնակցի նիստին: Գ. Ղազինյանը որպես լուծման տարբերակ նշեց այն, որ եթե ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը հրաժարականի մասին իր դիմումը հետ չի վերցնում, ապա հոգաբարձուների խորհուրդը

կարող է մերժել և պարտավորեցնել, իսկ մնացածը կմնա Գ. Գևորգյանի՝ որպես համալսարանականի իր խղճին: Գ. Ղազինյանի դիտարկմանն ի պատասխան՝ Գ. Գևորգյանը նշեց, որ արդեն 46 տարի է համալսարանում է, ուսանողից անցնելով բոլոր փուլերով՝ հասել է ընթացիկ պաշտոնին, և այդ ողջ տարիներին ընթացքում չի արել որևէ քայլ, որը կարող էր վնասել Համալսարանին՝ չնայած տարբեր մարդկանց կողմից արվող թմրկահարումներին: Դատական կարգով ԵՊՀ-ից 13 մլն դրամ ստանալու մասին տարբեր ՁԼՄ-ներով շրջանառվող լուրերի առնչությամբ նա ընդգծեց, որ աշխատանքից հանիրավի ազատման հայցով դիմել է դատարան, դատարանն ազատման որոշումը համարել է անօրինական, օրենքի շրջանակում պահանջել փոխհատուցում չստացված աշխատավարձի ու դատական ծախսերի համար, և այդ գումարը, ինչն իրականում չի էլ կազմել 13 մլն դրամ, չի ստացել, չի պատրաստվում ստանալ և երբևէ չի մտածել այդ մասին, թեև օրենքով դա իր իրավունքն է: Գ. Գևորգյանն անդրադարձավ ԵՊՀ ջրի տարայի հարցով «չարաշահումների» մասին շրջանառվող լուրերին, ինչի կապակցությամբ սուտ մատնության հիման վրա կատարվել է նախաքննություն, պարզվել է, որ որևէ խախտում չկա: Իսկ այդ տարայի ձեռքբերմամբ ԵՊՀ-ն առնվազն 10 անգամ փրկվել է գարշահոտությունից: Նա նաև ընդգծեց, որ ռեկտորի ժ/պ-ի պաշտոնում իր 2 տարվա գործունեության արդյունքում ԵՊՀ-ն կուտակել է ևս 1,8 մլրդ դրամ՝ չնայած ստեղծված բարդ պայմաններին ու աշխատավարձի բարձրացմանը, և ինքը Համալսարանը չի հանձնում «քանդված վիճակում», այլ դրական փոփոխություններով, այդ թվում՝ գիտակրթական ոլորտում: Անդրադառնալով հրաժարականի իր դիմումը հետ վերցնելուն՝ նա նշեց, որ չի շտապի հետ վերցնել այն, սակայն «դուռը խփել գնալու» տարբերակն էլ բացառված է:

Գ. Գևորգյանը որոշ առաջարկներ ներկայացրեց օրակարգի հարցի վերաբերյալ կազմված հայտարարության տեքստի նախագծի վերաբերյալ՝ առաջարկելով խնդրին հրատապ լուծում տալու անհրաժեշտությամբ պայմանավորված հայտարարության տեքստում նախատեսվող 3 քայլերից հանել Վարչական դատարանում Կառավարության որոշումը վիճարկելու և Եվրոպական համալսարանների ասոցիացիային դիմելու գործողությունները: Նա նշեց, որ որպես ԵՊՀ ռեկտորի ժ/պ իր անունից չի դիմելու վարչական դատարան: Գ. Ղազինյանը, Վ. Հովհաննիսյանը և Արհմիության նախագահ Ա. Ավետիսյանը նկատեցին, որ Վարչական դատարան կարող են դիմել տարբեր շահառու մարմիններ, այդ թվում՝ գիտական խորհրդի անդամները, հոգաբարձուների խորհրդի անդամները, այն սուբյեկտները, ում առնչվում է խնդիրը և այլն: Գիտական խորհուրդը հավանություն տվեց Եվրոպական համալսարանների ասոցիացիային դիմելու քայլը հանելու առաջարկին, մինչդեռ Վարչական դատարան դիմելու մասին քայլը որոշվեց թողնել հայտարարության տեքստում:

Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց հայտարարության տեքստի նախագիծը առաջարկված փոփոխություններով ու լեզվական խմբագրական շտկումներով դնել քվեարկության: Գիտական խորհուրդը քվեարկության արդյունքում 48 կողմ, 2 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց հետևյալ հայտարարությունը.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 12-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը, 2021 թ. մայիսի 6-ի արտահերթ նիստում քննարկելով ՀՀ Կառավարության կողմից նույն թվականի մայիսի 4-ին ընդունված՝ «ՀՀ Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը՝ հիմնադրամի կարգավիճակ ունեցող պետական բուհերի կանոնադրություններում կառավարման խորհուրդների փոփոխությունների վերաբերյալ, արձանագրեց.

ա) Մեր խորին համոզմամբ՝ որոշումը հակասահմանադրական է և հակաօրինական ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի տեսանկյունից, քանի որ ուղղված է բացառապես մեկ ոչ իրավաչափ նպատակի՝ իշխանությունների կողմից անսահմանափակ վերահսկողություն սահմանել բուհերի, մասնավորապես և առաջին հերթին ԵՊՀ-ի նկատմամբ: Խորհուրդը որոշումը դիտարկում է որպես ԵՊՀ-ի դեմ վերջին տարիներին իշխանությունների կողմից տարվող հետևողական և անթաքույց պայքարի հերթական դրսևորում:

բ) Որոշման ընդունումը համարում ենք նաև բարոյական նորմերի կոպիտ խախտում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի վարույթում է Հանրապետության նախագահի կողմից վիճարկվող «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի՝ բուհերի ինքնավարության իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ դիմումը: Այս պայմաններում ավելի նվազ իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ Կառավարության որոշմամբ, օրենքի վիճարկվող դրույթները բուհերի համար է՛լ ավելի վատ պայմաններով կյանքի կոչելու նախաձեռնությունը ակնհայտ արհամարհանք և անհարգալից վերաբերմունք է Հանրապետության Նախագահի, Սահմանադրական դատարանի և սվյալ օրենքի շահառու գիտակրթական ողջ հանրության նկատմամբ:

գ) Որոշման ընդունումը ուղեկցվել է իրավական և էթիկայի նորմերի կոպիտ խախտումներով. 2021 թ. ապրիլի 28-ին «e-draft.am» կայքում հրապարակելով նախագիծը և հանրային քննարկման ժամկետ սահմանելով մինչև մայիսի 14-ը՝ ՀՀ Կառավարությունը մայիսի 4-ին գաղտնի, առանց նիստ հրավիրելու, գրավոր ընթացակարգով ընդունել է որոշում՝ փաստի առաջ կանգնեցնելով բուհական ողջ համայնքին. որոշման նախագիծը չի քննարկվել բուհերում, ավելին՝ այդ

հաստատությունները նույնիսկ չեն տեղեկացվել իրենց իսկ կանոնադրություններում կատարվելիք փոփոխությունների մասին:

Դատապարտելով ՀՀ Կառավարության նման գործելակերպը՝ ԵՊՀ գիտական խորհուրդը արձանագրում է, որ «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումն անընդունելի է իրավական և բարոյական նորմերը խախտելու տեսանկյունից. դրա կիրարկումը խիստ վտանգավոր ազդեցություն կունենա Հանրապետության գիտակրթական միջավայրի վրա և անդառնալի վնաս կպատճառի բուհերի բնականոն գործունեությանը:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը և դրան հրատապ լուծում տալու անհրաժեշտությունը՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Դիմել Մարդու իրավունքների պաշտպանին՝ Սահմանադրական դատարանում ՀՀ Կառավարության նշված որոշման սահմանադրականությունը անհապաղ վիճարկելու խնդրանքով:
2. Միջոցներ ձեռնարկել Վարչական դատարանում վիճարկելու ՀՀ Կառավարության որոշման իրավաչափությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

17.05.2021թ.